ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ԱԶԱՏԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 դեկտեմբերի 2019 թվական N 35-Ա

## ԱԶԱՏԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 9 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջով Ազատամուտ համայնքի ավագանին **որոշում է՝**

Հաստատել Ազատամուտ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի **30**-ի թիվ 9 արտահերթ նիստի օրակարգը.

1.Ազատամուտ համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեի նախագիծը հաստատելու մասին:
2.Ազատամուտ համայնքի սեփականությունը հանդիսացող անշարժ գույքը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:

(ԿՈՂՄ 4) (ԴԵՄ 0) (ՁԵՌՆՊԱՀ 0)

ՎՈԼՈԴՅԱ ԲԱԼԱՍՅԱՆ
ՄԱՐՏԻԿ ԱՅՎԱԶՅԱՆ
ԱԼԻԿ ԷԼԱՐՅԱՆ
ԱՐՄԱՆ ՆԱԶԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ԱԶԱՏԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
30 դեկտեմբերի 2019 թվական N 36-Ն

**ԱԶԱՏԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով Ազատամուտ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հաստատել Ազատամուտ համայնքի 2020 թվականի բյուջեն՝
ա/ եկամուտների գծով 82818,2 հազար դրամ
բ/ ծախսերի գծով 82818,2 հազար դրամ
դ/ դեֆիցիտը 0 դրամ
2.Հաստատել համայնքի բյուջեի եկամուտներն ըստ առանձին եկամտատեսակների /հատված 1/,
3.Հաստատել համայնքի բյուջեից հատկացումներն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման /հատված 2/,
4.Հաստատել 3 կետով սահմանված բյուջետային ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման /հատված 3/,
5. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը /հատված 4/,
6.Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները /հատված 5/,
7.Սահմանել, որ ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի սահմանումներում՝ պահպանելով ծախսերի համամասնությունները,
8.Թույլատրել համայնքի ղեկավարին ծախսերի տնտեսագիտական և գործառնական դասակարգման նախատեսված հոդվածների միջև §Բյուջետային համակարգի մասին¦ ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համապատասխան կատարվող վերաբաշխումները կատարել հաստատված ծավալի 15 %-ի չափով:

(ԿՈՂՄ 4) (ԴԵՄ 0) (ՁԵՌՆՊԱՀ 0)

ՎՈԼՈԴՅԱ ԲԱԼԱՍՅԱՆ
ՄԱՐՏԻԿ ԱՅՎԱԶՅԱՆ
ԱԼԻԿ ԷԼԱՐՅԱՆ
ԱՐՄԱՆ ՆԱԶԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ԱԶԱՏԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
30 դեկտեմբերի 2019 թվական N 37-Ա

**ԱԶԱՏԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջով՝ Ազատամուտ համայնքի ավագանին **որոշում է՝**

1.Ազատամուտ համայնքի Ա. Անտոնյան փողոցի 23/1 հասցեում գտնվող անշարժ գույքի երկրորդ հարկը՝ 180քմ ընդհանուր մակերեսով անորոշ ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Վորլդ Վիժն Հայաստան» երեխաների պաշտպանության հիմնադրամին՝ երեխաների ցերեկային կենտրոն հիմնելու նպատակով:

(ԿՈՂՄ 4) (ԴԵՄ 0) (ՁԵՌՆՊԱՀ 0)

ՎՈԼՈԴՅԱ ԲԱԼԱՍՅԱՆ

ՄԱՐՏԻԿ ԱՅՎԱԶՅԱՆ

ԱԼԻԿ ԷԼԱՐՅԱՆ

ԱՐՄԱՆ ՆԱԶԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ